

ԱԿՏՈՒԱՐԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Մասնագիտությունը՝ **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ**

Որակավորումը՝ **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԲԱԿԱԼԱՎՐ**



ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ

- Առկա
- Հեռակա

ՈՒՍՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

→ **Առկա՝**
4 տարի

→ **Հեռակա՝**
5 տարի



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

→ **Մրցութային՝**
Մ(գ), Հլգ(գ) կամ Օտլ(գ)

→ **Ոչ մրցութային՝**
Օտլ կամ Հլգ



ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ՝

- **Առկա՝**
500.000 ՀՀ դրամ
- **Հեռակա՝**
350.000 ՀՀ դրամ




ԿՐԹԱԹՈՇԱԿ՝


- **Սովորական՝**
ամսական 5000 ՀՀ դրամ
- **Գերազանցության՝**
6050 ՀՀ դրամ
- **Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի՝**
Ա. Արզումանյանի անվան կրթաթոշակ՝ ամսական 20 000 ՀՀ դրամ



ՀԴՏՀ ուսանողներն ըստ տարակարգի՝ 30-70%-ի միջակայքում, օգտվում են նաև ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունքից, այդ թվում՝ սոցիալապես անապահով, միակողմանի ծնողազուրկ, սահմանամերձ շրջաններից ուսանողները: Զեղչման տարակարգերի մասին առավել մանրամասն տե՛ս **այստեղ:**



Ֆինանսական ցուցանիշները յուրաքանչյուր ընկերության կայունության և առաջընթացի բնութագրիչներն են: Պահանջվում է պարբերաբար գնահատել ընկերության ֆինանսատնտեսական ցուցանիշները, ինչի ամբողջական և խորքային վերլուծությամբ զբաղվում են ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի մասնագետները:



Ֆինանսական մաթեմատիկայի բակալավրը կարող է աշխատել ՀՀ պետական կառավարման մարմիններում, կենտրոնական և առևտրային բանկերում, ապահովագրական ընկերություններում, բորսաներում, միջազգային ընկերություններում, գիտահետազոտական հաստատություններում, արտադրական կազմակերպություններում՝ որպես ֆինանսական ոլորտի տնտեսամաթեմատիկական վերլուծաբան, ֆինանսական իրավիճակի գնահատող, տնտեսական զարգացման կանխատեսումներ իրականացնող:

